

ՇԱՐԿԱՐԱԹԵՐԻ ԳԻՆԸ:

Յարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով): Օտարաբաղա-
բացի բաժանորդները պիտի գիտեն այս հասցենով. Յե. Թագուստ.
Յե. Редакция Армянского Газета «Мшак».
Քիֆիստում կարելի է ստորագրվել խմբագրատան մէջ (սրբո-
նու առան) և պ. Կատարեանցի խանութում:

ՄՇԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ:

Մասնաւոր յայտարարութիւն տալի տուող պիտի վճարէ 10
հասարակ տառի համար 1 կողմէ արժաթ: Յայտարարութիւններ
տարվում են չայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Գերմա-
ներէն և Թուրքերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԿԱՐԱԹԵՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԿԱՐԱԹԵՐԻ

Կը հրատարակի 1874 թուին Նոյն
ընդամենով: Տարեկան գինն է 5 ռուբլ է,
էս տարվանը՝ 3 ռուբլ: Օտարաբաղաբա-
ղիկները գիտնում են հետևեալ հասցենով. Յե.
Редакция газеты «Мшак» въ Тифлисе.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Մշակի» յայտարարութիւնը:—Մենք լսում
ենք:—Ներքին տեսութիւն: Եւրոպայի շու-
րում չի թախ կենայ, Ներքին լուրեր:—Ար-
տաքին տեսութիւն: Թուրքիա—Խաւս
լուրեր:—Աւազարկան:—Յայտարարութիւններ:

ՄԵՆԻ ԼՍՈՒՄ ԵՆԻ

Թիֆլիսի Քաղաքային Վարչութեան պատ-
գամաւորների ընդհանուր ժողովում հոկտեմ-
բերի 23-ին յայտնվեցաւ որ Թիֆլիսի ջրանցքը
և գազի լուսաւորութիւնը յանձն է առնում,
եւրոպական երեւել «Société Générale» ընկե-
րութիւնը: Նրանք վերջանալուն պէս, «Մշա-
կը» և վրաց «Գրքեր» խոյն ուղարկեցին
մի հեռագիր Փարիզ երեւել «Société Gé-
nérale» ընկերութեանը, հարցնելով թէ՛ արդեօք
դուք էք վերցնում Թիֆլիսի ջրանցքը և
գազը, և եթէ ձեր ներկայացուցիչն այստեղ:
Պատասխանը արդէն յայտնի է մեր ընթեր-
ցողներին: Հեռագիրը տարվեցաւ յաւելվածով
(վրացերէն և հայերէն) յետոյ և մեր լրագիր-
ներին մէջ... Մենք լսում էինք, որ այդ հե-
ռագիրը կարդաւց յետոյ, սկսեցին ասել թէ՛
մեր ընկերութիւնը Փարիզում է, այլ
1-օնդօնում է՝ որի մասին և մեր հիւ-
պատոսն էլ մեզ գրել է:—Մենք կասկածում
էինք որ մեր հիւպատոսը չէր կարող մի ա-
ռանձին կերպով գովել 1-օնդօնի «Société Gé-
nérale» (Limited) ընկերութիւնը, որովհետեւ
որքան մեզ յայտնի էր, այդ ընկերութիւնը դեռ
չէր կայ, այսինքն մտքած չէ անգլիական վա-
ւերացրած ընկերութիւնների ցուցակի մէջ:
Անգլիայում մի բաժանորդական ընկերութիւն
եղած է համարվում, երբ մասնավոր արքունի
գանձարանը մի յայտնի տոկոս հարկ հիմնա-
կան զբաղակցից, իրաւունք է ստանում պաշ-
տօնապէս մտքած լինել վաւերացրած ընկե-
րութիւնների ցուցակի մէջ: Մենք ուղարկե-
ցինք մի պաշտօնական անձի մի հեռագիր և
պատասխան ստացանք որ 1-օնդօնում կայ
միայն մի ընկերութիւն որ վերաբերում է մեր
երկրին, այն է երկաթի հանքերը բովազործե-
լու նպատակով, և նա էլ երեւում է առանց
նշանակութեան...

Իսկ մի և նոյն ժամանակ մենք լսում
էինք, որ մեր քաղաքային վարչութիւնը ունէր
զբաղութիւն, և հեռագիրը 1-օնդօնի հետ,
լսում էինք, որ պ. Բուկո ունէր ներկայացրած
մի հաւատարմութեամբ ու ընկերութեան կա-
նոնադրութիւնը, որ մեր 1-օնդօնի հիւպատոսի
նամակները լաւ տեղեկութիւններ էին տալիս

այդ ընկերութեան մասին: Հիմի ի՞նչպէս պիտի
վճռէինք այդ տարակուսութիւնները...
Մենք, այսինքն տեղական լրագրութիւնը,
այնքան իրաւունք ունենք հետաքրքրվել մեր
քաղաքացիների վիճակին, որքան և ինքն քա-
ղաքային վարչութիւնը: Մարդը օդ ներշնչ-
չէ, փողոցները մարդու տեսնել, իստակ ջուր
խմել, լաւ լուսաւորութիւն ունենալ,—այն-
քան մեզ էլ վերաբերում է, որքան քաղաքային
վարչութեան այս կամ այն անդամին... ուրեմն
իսկապէս մենք իրաւունք կունենայինք պա-
հանջել որ այն բանը, որ մեր սրտին շատ
մօտ է, մեզ էլ ծանօթ լինի, մենք իրաւունք
կունենայինք պահանջել, որ 1-օնդօնի ընկե-
րութեան վերաբերեալ քաղաքային վարչու-
թեան մէջ ունեցած բոլոր թղթերը և գրա-
գրութիւնները տեղական լրագրութեանը պաշ-
տօնապէս հաղորդվեն...

Իսկ որովհետեւ այդ չին արել, մեզ միտք էր
հաւաքել մասնաւոր տեղեկութիւնների, և
այժմ այնպիսի տեղեկութիւններ հաւաքեցինք,
որք կտարեկապէս հաստատում են մեր հե-
ռագիրը:

Մենք լսում ենք հաստատող զեւրոպացի, որ
պ. Բուկոն տուած հաւատարմութեամբ վա-
ւերացրած չէ եղել անգլիական վարչութեան
կամ 1-օնդօնի ռուս հիւպատոսարանի ոչ մի
ստորագրութեամբ, այլ միայն ունի մի կնիք, որի
վերա գրած է «Société générale (limited)»,—
որ ոչինչ չէ նշանակում առանց վաւերացման
որ և է վարչութեան, որովհետեւ ամեն մարդ
կարող է փորագրել տալ իր համար մի կնիք
այս կամ այն անունով և գրաւել թղթի վրա:
Մենք լսում ենք, որ պ. Բուկոն ներկա-
յայցած ընկերութեան կանոնադրութիւնը, ոչ
այլ ինչ է, եթէ ոչ մի յայտարարութիւն մի
որ և է ընկերութեան, որ դեռ ևս զոյգացած
չէ, այլ զիտաւորութիւն ունի կազմակերպվել
ուրեմն որ դեռ չէ մտքել անգլիական ար-
քունի գանձարանը օրինական տոկոս հարկա-
ւորութեան: Եւ ընկերութեան անունը գրած
չէ յայտարարութեան վրա, այլ բոլորովն ու-
րիշ մի անուն, ուրեմն «Société Générale (li-
mited)» մինչև անգամ յայտարարութիւն
էլ չունի, ուր մնայ, որ հաստատված լինի կա-
նոնադրութիւնը:

Մենք լսում ենք, որ մեր 1-օնդօնի հիւ-
պատոսը գրում էր Փրանսիային լրագրով, իսկ
այստեղ միայն թարգմանեցին ռուսերէն և
երեւել այնպիսի անձինք, որք Փրանսիային էլ
բաւական չէր գիտէին: Մենք լսում ենք որ մեր
հիւպատոսը իր նամակների մէջ զգուշացնում էր
մեր տեղական վարչութիւնը, որ յիշեալ ընկե-
րութիւնը դեռ պաշտօնապէս ճանաչված չէ,
որ ոչ օրին յայտնի չէ ովքեր են նրա ներկա-
յայցած անունները, որ յիշեալ ընկերութիւնը
մտքած չէ վաւերացրած ընկերութիւնների
ցուցակի մէջ (ուրեմն պահանջվող հարկը
մտքած չէ), որ նա իր նամակներում անդա-
դար կրկնում էր թէ շատ զգուշ պիտի լինի,
որովհետեւ յիշեալ ընկերութիւնը դեռ ևս
պիտի ճարի իր համար անուն ու նշանակու-
թիւն 1-օնդօնի բոլորային վրա, որ կարողա-

նայ արդարացիւն այն հաւատարմութիւնը որ
կամենում են շնորհել նրան: Մի և նոյն ժա-
մանակ մենք լսում ենք, որ յիշեալ նամակ-
ները (երեւել Փրանսիային լրագրի տղիտութեան
պատճառով) այն ձևով թարգմանվեցան ռու-
սերէն, որ իբր թէ 1-օնդօնի «Société générale»
ընկերութիւնը, թէ և նոր կազմակերպված, կա-
նոնադրութիւն է արդէն համեմատելի ընկերութեան և
ճարի իրան մի պատուելի անուն լոնդոնեան
բոլորային վրա...

Այդ օգի մէջ գտնվող ընկերութեան
թիւնը մերկայացուցաւ ուրեմն...

Հիմի որ ինչդիրը պարզվեցաւ, մենք յոյս
ունենք, որ քաղաքային վարչութիւնը կը հա-
ւաքի ընդհանուր ժողովը, և եթէ պատահմամբ
պատգամաւորների թւում չը գտնվին գործի
հետ ժողովի ծանօթ բաւական անձինք, կա-
րելի կը լինէր զրոյց հրաւիրել գործը քն-
նելու համար:

Մի քաղաքի ինքնավարութիւնը
միայն այն ժամանակ ունի նշանակութիւն, երբ
նա երկարվում է հասարակական կարծիքի
ընդհանրութեան, կօտորով: Եթէ մենք ցան-
կանում ենք մեր Թիֆլիսի համար ռուսաց
այլ քաղաքների պէս ինքնավարութիւնը, այդ
այն պատճառով է, որ ինքնավարութեան հիւ-
սանքները կապված է և հասարակական
կարծիքի կօտորով, նրանից անբաժանելի է
հասարակական գործիչների, ուրեմն և լրա-
գրական ընդհանրութեան իրաւունքը:

Եւ ինչ ժամանակ չէր կարելի առանց բազմա-
կողմանի և երկար ըննութեան վճռել նշա-
նաւոր, կենսական հարցերը, կապվել 50 տարով
օգի մէջ գտնվող մի երեւակայական ընկերու-
թեան հետ, առանց խորհուրդ հարցնելու
հասարակական կարծիքից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇՈՒԲԻՆ ԶՈՒԱՆՈՒՄԸ ԶԻ ԹԱՍ ԿԵՆԱՅ

Մարթ մէ կարա է կարել տալի, մէ երկու ար-
շին մահուդի համա հինգ վից դուքան է ման
գալի, տուն է ուղում քրիշ: մէ քանի տարի կե-
նաւոր համա քան տուն է անդում, մէ խոս-
քով ասած է՝ տասը ջեր չափէ ու մէ ջեր ձեւէ,
վրա ինչ է մարթ չխափուի, եւսողի չըգայ: Ամա
էս մի արդ ջոգած մարթիք հինգ վից միլիօնի
բանը մէ գիշերումը քուծած ու քալափ արին:
Խիտ լաւ բան է ու, խիտ լաւ կամպանիա է ու,
էլ ոչով սրա վրա է քան չի վիկալի ու, արի ձեւը
ներեմէս չը դու թողնիք էս կամպանիին ա-
սում է, թէ չէ խիտ մինչ զարարի կու հանդի-
րիք կուտէ, ու... Մէ հինգ վից մարթ խոսե-
ցան ու մնացածները, վունց որ իրանց սովորու-
թիւն է, սուս ու փուս վնսցին վրա էս մի գո-
գալ քաղաքը խոսն ու հինգ տարով գերի շինին
էս պատուական կամպանիինը: Էնէնց վրա ինչ
էս խոսն ու հինգ տարումը միջ լուս ու ջուր
պէտքը գայ, էն կամպանիին տայ միջ ու ինչ էն
կամպանիին փուզ պէտքը գայ, մինք տանք: Էս-
տու վրա էլ լաւ բան:

Էտէնց վունց կուլի, պարունիլը, հանաք մաս-

խարութիւն է թէ ինչ է: Մօդ էլաք, խոսեցաք
փափէն խօ չէր ստուում, մէ երկու օր անց էր
կացի էլի կու խօսէիք, փիքը կօնէիք, աչի մար-
թիք շատ կան մի քաղքումը, մասնաւոր կօ-
նէիք: խօսքը խօսք կու բերէ, միտքը ուրիշ միտք
ու անմիջ բանեմէն բան կու դուս գայ, թէ չէ
էս հանգի բանը լրակախանա խօ չէ, վրա մարթ
թաթիս ու հանէ: Խիտ խալի տակեմէն դուս
էկաւ, վրա ինչ կամպանիա, ինչ վրա, ինչ վրա-
տան («Մշակ» ու «Գրքեր») Գործիքն ու 1-օն-
դօնեմէն բերի տուած դէպէնիլը: Թուրմէ էս
կամպանիին դի մօզօնօլի բան է էլի: Ափէ-
րում, ափէրում, խայտառակութիւն խայտառա-
կութեանը: Նա փայաք, ինչ էլաւ էլաւ, Աս-
տուծ տայ էլ էս հանգի բան չըլի: Խափողը
ակուքները մօզմոցնում է Գարաւիմ Եսակու-
լիչի հանգն ու խափածը զլուսումը խալիով ուլայ
քու խաւում: Է ասում: Բաւ վնսց գիշերի-
դրանի ասմունքը դանա էնէ, վրա մարթ հա-
լիլի առջիւր դուքիլով կնգայ մօզ պարծենայ թէ,
իս էս գիշեր դասեղանիս իմ գնում, քաղքի համա
պիտի չանէքս դաթիցնիս ու դասիդանիումը
դուրթ չանէքս դաթիցնիս, չէ թէ խօսելով, ամա
օրչաւով: Տօ ախար, օրնած հըքի, քաղաքը քիչ
ձէն է տուի, աս ձէն հանէ է, չէ վրա օրէնքը
քիչ էնդուր է նստեցի էնդի, վրա քաղքի
դարձիս դարման անիս: Ամա շատը խալի էլ
չէ գնում դասիդանիս, ասելով թէ՛ գողութիւն
քաղաքն էլ քարը տայ, մէկէն էլ ու թէ գնում է,
եւ մէ անգնեմէն տուն է թողնում մէկէնեմէն դուս
է թողնում, եւ թէ չէ խալի էլ վունցի չէ տուն
թողնում: Գառաւ վրա՝ բուրթին էլ ու մէկդան
էլ մնում է հինգ վից մարթու ձեւին: Միլի իք
գործում, միլի, պարունիլը, ուլ որ գնաւ իք ու
չիք գնում ու թէ գնացիք ուլ որ պիտի խօսիք ու
չիք խօսում: Միլի թէ գողութիւն էս է Աստուծ
մօզ էլ ու օրէնքի մօզ էլ, չէ թէ ուրիշով ու չո-
րեքաթէ լօրի չտալի:

Համալ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 23-ին տօնեցին Ս. Պետերբուրգի
մէջ հանքային ճեմարանի (Горный институтъ) 100
տարուաւ տարեդարձը: Գերմանական «St. Ptg.
Ztg.» մանրամասն տեղեկութիւն է տալիս այս
տօնախմբութեան մասին: Տօնը սկսվեցաւ Կայսրի
բէսկրիպտի կարգադրմով քաղմարի հանդիսա-
կանների ներկայութեամբ, որոնց թւումն էին
Ն. Կ. Բ. Պետրոս և Ալեքսանդր Օլշէնբուրգի
խմաները և Սարգիս Լէպլանդերգի իշխանը:
Հիմարանի կառավարիչը, Ժէնէրալ Կօլչարովը
դէպքին յարմարեցրած մի ճառ ասեց: Այս ճա-
ռից յետոյ պ. Պօզդեբովը, Ս. Պետերբուրգի քա-
ղաքապետը, շնորհաւորեց ճեմարանը մայրաքա-
ղաքի կողմից: Ճառատասանական ամբիօնի վերա
նորան հետեցին Պ. Գօբլէ, Փարիզի ճեմարանի
և հանքային ուսումնարանի (école des mines) պատ-
գամաւորը, պ. Լաւրէնս Սմիթ (Smith) երեւելի մի-
ներալօք և քիմիկոս, Միացեալ Նահանգների պատ-
գամաւորը. պ. Եւրո ՊԷ Կիւպպէ (de Cuyper)
Լիւտիլի պատգամաւորը, պ. Գօլտօր Բուդօլֆ
Բրէնէրը Ֆրանկֆուրտից, որը յայտնեց միացած
Գերմանիայի համակրութիւնը Պետերբուրգի ճե-
մարանին: Այս բոլոր ճառերը հանդիսականների
կողմից ընդունվեցան վաւերած ողորութեամբ և
ծափահարութիւններով: Մի քանի ռուս գիտնա-
կան ընկերութիւններ, համալսարաններ և այն
կամ իրանց ներկայացուցիչներ ուղարկեցին կամ
շնորհաւորական աղբիւններ: Հանդէսը վերջացաւ
ժամը 4-ին և դարանից յետոյ եղաւ մի բանկետ
Գէմուտի հօտէլի մէջ:
